ւորն և հաւատացեալ ժողովուրդն. և շատ քաջութիւն և առաքինութիւն եցոյց մեծազօր Թագաւորն Տրդատ 'ի Հայաստան և 'ի Հռոմ. մինչ գնաց 'ի Հըռոմ առ Կայսրն Կոստանդիանոս, և դաշնադրութեամբ հաստատեցին անդ՝ սէր մեծ 'ի մէջի իւրեանց՝ յորդորմամբ սրբոյն Գրիգորի և սրբոյն Սեղբեստրոսի, որ և գրեալ կայ խնդրողացն գիւտ. և մեծաւ շքեղութեամբ դարձան 'ի Հայաստան՝ Տրդատ և սուրբն Գրիգոր: Եւ իշխանքն Հայոց դեղամահ արարին զՏրդատ, և խաւարեցուցին զարեգակն իւրեանց:

Խոսրով՝ որդի Տրդատայ. սա փոքր հասակաւ ոչ նմանեալ հօրն, այլ և չունէր զքաջութիւն և զբարի յիշատակ՝ արժանի գրելոյ: Սակայն զխաղաղութիւն արար ընդ արքային Պարսից Շապհոյ՝ Թագաւորեաց ամս Թ:

Տիրան՝ որդի Խոսրովու՝ ամս ԺԳ: Սա զքաջութիւն ինչ ոչ ցուցեալ, 'ի

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան